

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) իրավական ապահովման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է:
2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Արդարադատության նախարարը (այսուհետ՝ նախարար):
3. Վարչությունը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, նախարարության և սույն կանոնադրությունների հիման վրա:
4. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են վարչության պետը, վարչության պետի տեղակալը և վարչության բաժինները:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության նպատակներն են՝
 - 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման և համակարգման ապահովումը.
 - 2) նոտարիատի, հարկադիր կատարման, փաստաբանության, քրեաիրավական, քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում քաղաքականության մշակումը և մեթոդական ղեկավարման իրականացումը.
 - 3) քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության ապահովումը.
 - 4) Կառավարության դեմ ներկայացված դատական հայցերով Կառավարության դիրքորոշման ներկայացման ապահովումը.
 - 5) սնանկության գործերով կառավարիչների, հաշտարարների, նոտարների թեկնածուների, նոտարական և դատավարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորումների և ստուգումների գործընթացի կազմակերպման ապահովումը:
6. Վարչության խնդիրներն են՝
 - 1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունը, առկա բացերի և հակասությունների վերհանումը, միջազգային փորձի ուսումնասիրությունը.
 - 2) Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների ուսումնասիրությունը.
 - 3) հարկադիր կատարումն ապահովող ծառայության, նոտարների և նոտարական պալատի, ինչպես նաև օրենքով նախատեսված կազմակերպությունների գործունեության օրինականության ապահովումը.

4) նոտարական գործունեության ապահովումը.

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու մասին դիմումների վերաբերյալ Ոստիկանության կազմած եզրակացությունների ուսումնասիրումը, նախապատրաստումը և քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի նիստի անցկացման ապահովումը.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացման ապահովումը:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ու իրավական ակտերի նախագծերի, նախարարության գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ պարզաբանումների և մեթոդական ուղեցույցների մշակման աշխատանքների կատարում.

2) նոտարիատի, հարկադիր կատարման, փաստաբանության, քրեահրավական, քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտների օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակում.

3) այլ պետական մարմինների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների վերաբերյալ կարծիքների մշակման աշխատանքների կատարում.

4) սնանկության գործերով կառավարիչների, հաշտարարների, նոտարների թեկնածուների, նոտարական և դատավարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորումների և ստուգումների կազմակերպման աշխատանքների կատարում.

5) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վճռաբեկ դատարանների որոշումների իմպլեմենտացիային ուղղված ուսումնասիրությունների, համեմատախրավական վերլուծությունների և օրենսդրական բարեփոխումների մշակման աշխատանքների կատարում.

6) օրենքով սահմանված դեպքերում իրավական նորմերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների տրամադրման աշխատանքների կատարում.

7) ներկայացված առաջարկությունների, դիմումների և բողոքների օրենքով սահմանված կարգով քննարկման աշխատանքների կատարում.

8) Վարչության կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրազեկման բարձրացման միջոցառումների, հանրային և մասնագիտական քննարկումների կազմակերպման աշխատանքների կատարում.

9) քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում.

10) հայցադիմումների պատասխանների (առարկությունների) կազմման աշխատանքների ապահովում.

11) Կառավարության հանձնարարականների կատարում.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Վարչության իրավասություններն են՝

1) նոտարիատի, հարկադիր կատարման, քրեաիրավական, քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտների օրենսդրության մշակումը, կատարելագործումը և համակարգումը.

2) նոտարների, նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի, դատավարական գործողություններին մասնակցող թարգմանչի, սնանկության գործերով կառավարիչների և հաշտարարների որակավորման գործընթացների իրականացումը.

3) հանրային և մասնագիտական քննարկումների իրականացում.

4) քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության կազմակերպումը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության դեմ ներկայացված դատական հայցերով Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշման ներկայացումը դատարան.

6) Վարչության գործառույթներից բխող այլ իրավասություններ:

5. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ

9. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են՝

1) համակարգի իրավական ապահովման բաժինը.

2) օրենսդրության մշակման բաժինը:

10. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

6. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Համակարգի իրավական ապահովման բաժնի գործառույթներն են՝

1) այլ պետական մարմինների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց ներկայացրած օրենսդրական փոփոխությունների առաջարկությունների վերաբերյալ կարծիքների մշակման աշխատանքների կատարում.

2) սնանկության գործերով կառավարիչների, հաշտարարների, նոտարների թեկնածուների, նոտարական և դատավարական գործողություններին մասնակցող թարգմանչի որակավորումների և ստուգումների կազմակերպման աշխատանքների կատարում.

3) օրենքով սահմանված դեպքերում իրավական նորմերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանումների տրամադրման աշխատանքների կատարում:

4) ներկայացված առաջարկությունների, դիմումների և բողոքների օրենքով սահմանված կարգով քննարկման աշխատանքների կատարում:

5) քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպում:

6) հայցադիմումների պատասխաններ (առարկությունների) կազմման աշխատանքների ապահովում:

7) Կառավարության հանձնարարականների կատարում:

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում:

12. Օրենսդրության մշակման բաժնի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ու իրավական ակտերի նախագծերի, նախարարության գործառույթներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ պարզաբանումների և մեթոդական ուղեցույցների մշակման աշխատանքների կատարում:

2) նոտարիատի, հարկադիր կատարման, փաստաբանության, քրեաիրավական, քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտների օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակում:

3) Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական և վճռաբեկ դատարանների որոշումների իմպլեմենտացիային ուղղված ուսումնասիրությունների, համեմատաիրավական վերլուծությունների և օրենսդրական բարեփոխումների մշակման աշխատանքների կատարում:

4) Վարչության կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրազեկման բարձրացման միջոցառումների, հանրային և մասնագիտական քննարկումների կազմակերպման աշխատանքների կատարում:

5) Կառավարության հանձնարարականների կատարում:

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում:

7. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Նախարարը ղեկավարում է նախարարության գործունեությունը:

14. Վարչության գործունեությունը համակարգում է նախարարի համապատասխան տեղակալը՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում:

15. Վարչությունը գործում է վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:

16. Վարչության պետն անմիջական հաշվետու է նախարարին և նախարարի համապատասխան տեղակալին:

17. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է նախարարը կամ նախարարի համապատասխան տեղակալը:

18. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը վարչության պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ: